Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն # 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 25 օգոստոսի 2018թ.

Նիստը նախագահում էր՝

Վալերիյ Օսիպյան	ՀՀ ոստիկանության պետ, ՀՀ ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի նախագահ

Քարտուղար՝

Արգինե Հովհաննիսյան	ՀՀ ոստիկանության ՀԿԼ վարչության ՀԿՀ ավագ տեսուչ

Նիստին մասնակցում էին՝

1. Արտաշես Ավոյան	ՀՀ ոստիկանության պետի խորհրդական, ՀՀ ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի նախագահի տեղակալ
2. Մարի Մաթոսյան	«Կանանց աջակցման կենտրոն» Հ/Կ
3. Դավիթ Պեդանյան	«Վարորդի ընկեր» Հ/Կ
4. Ավետիք Իշխանյան	«Հայաստանի Հելսինկյան կոմիտե» Հ/Կ
5. Բաբկեն Սեդրակյան	«Պատվավոր հյուպատոսների միություն» Հ/Կ
6. Ավետիս Ավետիսյան	«Հատուկ գնդի վետերաններ» Հ/Կ
7. Գևորգ Տեր-Գևորգյան	«Ազատամարտիկների դաշինք» Հ/Կ
8. Ռաֆայել Աֆրիկյան	«Իրազեկ քաղաքացիների միավորում» Հ/Կ
9. Լիլիթ Չիբուխչյան	«Զոհված ոստիկանների ընտանիքների աջակցություն» Հ/Կ
10. Երվանդ Պետրոսյան	«Հասարակական անվտանգության միջազգային ոստիկանական կորպորացիա» Հ/Կ
11. Սուսաննա Վարդանյան	«Կանանց իրավունքների կենտրոն» Հ/Կ
12. Միքայել Արամյան	«Ընդդեմ իրավական կամայականության» Հ/Կ
13. Հարություն Համբարձումյան	«Ընտրությունը Քոնն է» Հ/Կ

14. Իզաբելլա Սարգսյան «Եվրասիա Համագործակցություն» հիմնադրամ
15. Արթուր Սուքիասյան «Իրավաբանների հայկական ասոցիացիա» Հ/Կ
16. Սիաբանդ Բաքոյան «Եզդի և Հայ ժողովուրդների բարեկամություն» Հ/Կ
17. Ժաննա Ալեքսանյան «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» Հ/Կ
18. Սնակ Գրիգորյան
19. Լևոն Ղազարյան
20. Իշխան Խաչատրյան
21. Արկադյա Գևորգյան
22. Անահիտ Հերգնյան
23. Հայկ Գաբրիելյան
24. Վահան Հարությունյան
25. Արմեն Պետրոսյան
26. Արմեն Մկրտչյան
27. Գեղամ Հարությունյան
28. Արտավազդ Սարգսյան
29. Դավիթ Խոսրովյան
30. Աշոտ Հակոբյան
31. Վլադիսլավ Ֆարամազյան
32. Սարո Սարոյան
33. Արսեն Հայրիյան
34. Ֆելիքս Հայրապետյան
35. Սերգեյ Ղահրամանյան
36. Արման Մնացականյան
37. Ադրինե Թորոսյան
38. Հայկազ Ավետիսյան
39. Արա Կարապետյան
40. Տիգրան Պետրոսյան
41. Արամ Մանուկյան
42. Փայլակ Ֆահրադյան
43. Սահակ Սալնազարյան
44. Կորյուն Ավանյան

Հարգելի բացակա՝

1. Անի Չատինյան
2. Կարինե Հարությունյան

Օրակարգ՝

1. ՀՀ ոստիկանության պետի հաղորդումը ՀՀ ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի դերի, նշանակության և առաքելության մասին: Խորհրդի անհատական կազմի հրապարակում:

   / Հ/Խ նախագահ՝ Վ. Օսիպյան /

2. ՀՀ ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի աշխատանքային մարմինների մասին:

   / Զեկուցող՝ Հ/Խ անդամ Ա. Մկրտչյան /

3. «Անվստահության ժառանգություն. հրատապ խնդիրներ – անհապաղ լուծումներ»:

   / Հ/Խ նախագահ՝ Վ. Օսիպյան /

4. «Անվտանգ սեպտեմբեր՝ ապահով ուսումնառություն» միջոցառման մասին:

   / Զեկուցող՝ Հ/Խ անդամ Ս. Ղահրամանյան /

<u>ՀՀ ոստիկանության պետի հաղորդումը ՀՀ ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի դերի, նշանակության և առաքելության մասին: Խորհրդի անհատական կազմի հրապարակում:</u>

Լսեցին՝ ՀՀ ոստիկանության պետ Վ. Օսիպյանի հաղորդումը ՀՀ ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի դերի, նշանակության և առաքելության մասին:

Վ. Օսիպյանը ողջունեց հասարակական խորհրդի անդամներին՝ հավելելով, որ որդեգրվել է Խորհրդի գործունեության առավել բաց, հրապարակային և թափանցիկ

գործելառճ, և այդ կապակցությամբ արձանագրեց, որ այսուհետ Ոստիկանության գործունեության հիմնական և հայեցակարգային ուղղություններին առնչվող բոլոր կարևորագույն որոշումներն ընդունվելու են հանրային քննարկումների, վերլուծությունների և Խորհրդի անդամների պարբերական շփումների արդյունքում:

Խորհրդի նախագահն իր խոսքում նշեց, որ արդեն ակնհայտ տեսանելի է դրական իմաստով ոստիկանության նկատմամբ հասարակության վերաբերմունքի փոփոխության ու վստահության աճի դինամիկա, ներկայացրեց ասվածը հիմնավորող վիճակագրական տվյալներ:

Այնուհետև Վ. Օսիպյանը խորհրդի անդամներին հանդիսավոր պայմաններում հանձնեց Խորհրդի անդամության վկայականներ և շնորհավորելով նրանց՝ շնորհակալություն հայտնեց Ոստիկանությանն աջակցելու պատրաստակամության համար:

Որոշեցին՝ ՀՀ ոստիկանության պետ Վ. Օսիպյանի հաղորդումը ՀՀ ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի դերի, նշանակության և առաքելության մասին ընդունել ի գիտություն:

<u>ՀՀ ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի աշխատանքային մարմինների մասին:</u>

Լսեցին՝ ՀՀ ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի անդամ Արմեն Մկրտչյանի զեկույցը ՀՀ ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի աշխատանքային մարմիններ ձևավորելու մասին:

Զեկուցողը Խորհրդի արդյունավետ գործունեությունն ապահովելու նպատակով, խորհրդի՝ միևնույն մասնագիտական կարողությունների տիրապետող կամ համասեռ բնույթի հասարակական գործունեություն իրականացնող և ընդհանուր շահեր հետապնդող անդամներին միավորելու, վեր հանված խնդիրներն օպերատիվ կարգով քննարկելու ու Խորհրդին լուծումներ առաջարկելու նկատառումներով պայմանավորված՝ առաջարկեց ստեղծել Խորհրդի աշխատանքային մարմիններ՝ Հանձնաժողովներ:

Ա. Մկրտչյանն առաջարկեց Խորհրդին հավանություն տալ Հանձնաժողովների ձևավորման առաջարկությանը, հանձնարարել Քարտուղարությանը 10-օրյա

ժամկետում Խորհրդի անդամների ցանկության հիմքով ձևավորել Հանձնաժողովների անհատական կազմերը:

Որոշեցին՝ ձևավորել ՀՀ ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի հետևյալ հինգ հանձնաժողովները.

- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության հարցերի մշտադիտարկման հանձնաժողով,
- ՀՀ ոստիկանության մարմինների գործունեության նկատմամբ հանրային հսկողության իրականացման հանձնաժողով,
- Նորմատիվ-իրավական ակտերի նախագծերի և ոստիկանության գործունեությանն առնչվող այլ ռազմավարական ու հայեցակարգային փաստաթղթերի նախագծերի փորձաքննության և հանրային քննարկումների ապահովման հանձնաժողով,
- ՀՀ ոստիկանության գործունեության տեղեկատվական թափանցիկության և ԶԼՄ-ների ու քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ փոխգործակցության ապահովման հանձնաժողով,
- Ճանապարհային երթևեկության անվտանգության և Ոստիկանության արտաքին ծառայության մշտադիտարկման հանձնաժողով:

<u>«Անվստահության ժառանգություն. հրատապ խնդիրներ – անհապաղ լուծումներ»:</u>

Լսեցին՝ ՀՀ ոստիկանության պետ Վ. Օսիպյանի զեկույցը օրակարգային հարցի վերաբերյալ:

Վ. Օսիպյանն իր խոսքում ընդգծեց, որ Հասարակական խորհուրդն ունի բացառիկ առաքելություն և, որ Ոստիկանության արդյունավետ աշխատանքի ամենակարևոր երաշխիքներից մեկը՝ Ոստիկանության նկատմամբ հասարակության վստահության վերականգնումն է, ու ինքն այդ բարդ գործում չափազանց կարևոր տեղ է հատկացնում նման ձևաչափով համագործակցությանը:

Անդրադառնալով ոստիկանություն նկատմամբ հասարակության անվստահության հարցին՝ Վ. Օսիպյանը նշեց, որ հասարակության հետ աշխատելու մեր հատուկ միջոցը այսուհետև պետք է լինի պրոֆեսիոնալիզմը, արդարամտությունը, մարդակենտրոն գործելաոճը: Վստահեցրեց, որ այլևս չեն լինելու փակ թեմաներ, անթույլատրելի ոլորտներ կամ անձեռնմխելի անձինք: Նշվեց,

որ արտոնյալ մարդիկ, ապահովագրված օրինազանցներ ու օրենքից բարձր կանգնած մարդիկ չկան և որ օրենքի առջև հավասարության սկզբունքը, կոռուպցիայի, անօրինականության և հանցավորության դեմ անզիջում պայքարի առաջնահերթությունները Ոստիկանության գործունեության մշտական ուղեկիցն են:

Իբրև եզրափակում, Վ. Օսիպյանը կոչով դիմեց բոլոր իրավապաշտպաններին, որ առանց ժամանակ կորցնելու ներկայացնեն իրենց ձեռքի տակ գտնվող հրատապ խնդիրները, դիմեն առանց վարանելու և երկմտելու. խնդիրներ, որոնք նախկինում ինչ-ինչ պատճառներով չեն բարձրաձայնվել, և որոնք սակայն անհապաղ քննարկման կարիք ունեն: Նշվեց, որ դրանք կարող են հենց այսօր արդեն քննարկվել և առաջարկված լուծումներով օգտակար լինել կյանքի ծանր իրավիճակներում հայտնված մեր հայրենակիցներին՝ ի շահ երկրում օրինականության ամրապնդման:

Որոշեցին՝ ՀՀ ոստիկանության պետ Վ. Օսիպյանի զեկույցը օրակարգային հարցի վերաբերյալ ընդունել ի գիտություն:

<u>«Անվտանգ սեպտեմբեր՝ ապահով ուսումնառություն» միջոցառման մասին:</u>

Լսեցին՝ ՀՀ ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի անդամ Սերգեյ Ղահրամանյանի զեկույցը «Անվտանգ սեպտեմբեր՝ ապահով ուսումնառություն» միջոցառման մասին:

Ս. Ղահրամանյանն իր զեկույցով անդրադարձավ ճանապարհային երթևեկության անվտանգության խնդիրներին և ներկայացրեց վիճակագրական տվյալներ:

Վերլուծելով տվյալները՝ Ս. Ղահրամանյանն ընդգծեց, որ խնդիրն առավելապես ունի արմատական բնույթ, և որ անվտանգության հարցը չի կարող ամբողջապես լուծվել միայն փողոցներում ոստիկանական ուժերի ներգրավմամբ: Նշվեց, որ նման ծառայությանը Հասարակական խորհրդի ջանքերով, ակտիվ երիտասարդներից բաղկացած իրավագիտակից ու շահագրգիռ հերթապահ խմբերի ներգրավումը լրացուցիչ խթան կհանդիսանա քաղաքացիներին զերծ պահելու անցման համար չնախատեսված տեղերով փողոցը հատելուց, կանխելու ավտոմեքենաների կայանումը չնախատեսված հատվածներում, բացառելու այս կարգի հակահասարակական դրսևորումները և այլն: Զեկուցողն արձանագրեց, որ «Վարորդի ընկեր» հասարակական կազմակերպությունը, համանման միջոցառումներ իրականացնելու հարուստ փորձ ունի, և պատրաստ է

կազմակերպության ներուժը ներդնել միջոցառումը հավուր պատշաճի կազմակերպելու և իրականացնելու համար:
Ս. Ղահրամանյանը հավելեց, որ նախատեսվում է միջոցառումն իրականացնել սեպտեմբեր ամսվա ընթացքում, իսկ միջոցառման արդյունքներով արձանագրված ցուցանիշներով համապատասխան զեկույց ներկայացնել Խորհրդին, ինչպես նաև հրապարակել այն Ոստիկանության պաշտոնական կայքէջում: Միջոցառման կազմակերպատեխնիկական առաջադրանքը մշակելու և վերջինիս իրականացման նկատմամբ պատշաճ հսկողություն սահմանելու, արդյունքներն ամփոփելու նպատակով առաջարկվեց Խորհրդին՝ ձևավորել նախաձեռնող խումբ՝ հետևյալ կազմով. Դավիթ Պեղանյան, Սերգեյ Ղահրամանյան, Երվանդ Պետրոսյան, Արման Մնացականյան, Սահակ Սալնազարյան և Ռաֆայել Աֆրիկյան: Նախաձեռնող խմբի աշխատանքների համակարգումը առաջարկվեց վերապահել «Վարորդի ընկեր» հասարակական կազմակերպության լիազոր ներկայացուցիչ Դավիթ Պեղանյանին:

Որոշեցին՝ հավանություն տալ «Անվտանգ սեպտեմբեր՝ ապահով ուսումնառություն» միջոցառման ծրագրին:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ Վ. ՕՍԻՊՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ